



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



6075



1862

17090

984

ON5

Վ Զ Գ Ե Յ Ի Կ

Ա Մ Բ Հ Ե Ր Ա Խ Ա Թ Ի Ւ Խ Ա Ր

Կ Ո Ս Ե Վ Ա Մ Պ Ո Լ Ի Ա

Խ Ա Վ Ա Ր Ա Ն Հ Ա Ր Ա Տ Ա Տ Ա Հ Ա Վ Ա Տ Ա Խ

1862

323.1(47.925)

5-63

2001

323.1(47.925)  
5 - 63

8081

2005

գրտ-ն  
2045

Ա Զ Գ Բ Յ Ի Ն

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԿԱՆԻ ՄՐ

Հայոց Ազգին պարծանքները, և Հայա-  
տանի դրիցը, հողին, օդոյն և ջրոյն առա-  
ւելութիւնները արդէն ամենայն աղգասիրաց  
ծանօթ ըլլալով, աւելորդ կը համարինք հոս  
մէկիկ մէկիկ նկարագրել: Մանաւանդ աղէկ  
գիտնալով, որ ան պարծանաց նիւթերը գը-  
րեթէ անհետացեալ ըլլալով, և այն սքանչելի  
օգն կը շնչեն հիմակ խումբ մը անհամար թըշ-  
ուառութեանց մէջ գերի եղող Համագգեաց,  
աւելի դառն տրտմութեան առիթ տուած  
պիտոր ըլլանք աղգին բարեզգեաց և փափուկ  
սրտերուն: Խւստի իրաւամբք կը լոենք Հայոց  
քաշած ամենակերպ խեղճութիւնները, չենք  
յիշեր իր անմահ յիշատակաց արժանի ան-  
մոռանալի պարծանքները, միայն մեզի անհը-  
րաժեշտ պարտք կը համարինք այնպիսի նիւ-  
թերու վրայ խօսիլ, ուսկից կը յուսանք օ-  
գուտ մը քաղել, և յառաջադիմութեան նը-  
շուլ մը տեսնել Ազգին շնորհիւր: Եւ խօս-  
քերնիս ամփոփելով, օգտակարագոյն կը հա-  
մարինք հոս հիմակուհիմա խօսիլ միայն Տիգ-  
րանակերտի վրայ ընդհանրապէս զորն որ առ  
ժամանակիս ամենայն մասամբք Հայաստանի  
ընտրելագոյն մասը և աղգային յառաջադի-

մութեան ալ աւելի ընդունակ և յարմար տես  
զը և կեդրոնը կը համարինք, թէ ըստ ինքեան  
երկրին բարեբեր արգասաւորութեան, թէ օ-  
դոյն և ջրոյն գերազանցութեան, և թէ ա-  
մենակերպ բերոցը և վաճառականութեան  
համար ունեցած աղնիւ յատկութեանցը հա-  
մար :

Ինչպէս հին ատենը, ասանկ ալ հիմակ,  
Տիգրանակերտ քաղաքը Օսմանեան Տէրու-  
թեան մեծամեծ և վաճառաշահ քաղաքներուն  
մէկը սեպուած է, իր գիրքը շատ սքանչելի,  
արևմտեան կողմը կ'իյնի օրուան ո՛ը ճամբայ  
հեռու Գրաբաճատաղ լսուած լեռը՝ որ իր ձիւ-  
նապատ գագաթներով միշտ զովագին պաղու-  
թիւն մը կը ծաւալէ Տ—կերտի հովտին վրայ,  
որուն հիւսիսային կողմը կ'իյնան Տօրոս լե-  
բան շղթայաձև գոտիները խիստ բարձր և բո-  
լորը արծաթապատ ձիւնափայլ, և հարաւա-  
յին կողմը ալ ոչ լեռ և ոչ բարձրութիւն մը  
կերեայ, այլ մանր բլրակներ և անբաւ տարա-  
ծութիւն մը ծովանման անապատի՝ որուն սահ-  
ման և հորիզնը մարդուս աչքը չկրնար նըշ-  
մարել: Խսկ արևելեան կողմը պատած է խումբ  
մը մանր և կանանչազարդ բլրակներու, որոնց  
առջեկի հովտին մէջէն և անմիջապէս քաղա-  
քին մօտ իր որընթաց ալեքը կը թաւալէ Տիգ-  
րիս Եղեմական զրախտին և բոլոր աշխարհին  
հոչակաւոր գետերէն մէկը, որ իր գետեղեք-  
քը սքանչելապէս պարախացընելով իր ան-

ZUUN-Արմ. ССР

50204-ահ

Ա. Մաշնիկյան  
ՅԱՍՆԻԿԱՌԻ ԱՎԱՐ

35950-66

մահ ջրովը , քաղաքին պարտէղներուն առջեւէն սահելով կ'անցնի կ'երթայ Ըսորեստան , “Եինուե , Բարելոն և Պասրա , մքնչե հասնի Պարսկային ծոցը : Իր հողը խիստ բարեբեր է , և ասոր ալ պատճառը կարծիմ թէ Տիգրիսի և Եփրատայ գրախտի գետոց մէջ տեղ ընկնալի է , որովալ Միջագետք և Միջագետաց մայրաքաղաք կը սեպուի : Հողը ամենայն կերպ արդիւնք և պտուղ կը բուսցընէ , ընտիր և առաստ արգէն աշխարհածանօթ է իր աննման սեխն ու ձմերուկը , ասկէց ’ի զատ տանձ խնձոր , սալոր , գեղձ ու ծիրանի , ամեն կերպ բանջարեղէն , Փընտըգ , պթում , նուշմեղը , բամբակ , քեօք պօյասը , քիթրէ , գըղթոր և բուրգ , որով աս օրս Մարսիլիոյ և Լոնտրայի հետ կը վաճառակցի , անբառութիւն ոչխարաց և անզուգական ձիոց և օդապարիկ նժոյգներու կը բովանդակէ իրեն անմիջապէս կից Միրտնայ անապատին մէջ , Ըրաբացոց ձեռքով զարմանեալ , չեմյիշտատկեր իր ամենառատ ընտիր ցորեանն ու գարին ու եղը և այլն , որոնք խիստ ալաժանեն , և իր գաւառին բազմոթիւ բնակչացը բաւական ըլլալէն ’ի զատ , բոլոր իր շրջակայները կերակրելու ալ կ'օգտէ և կ'աւելնայ : Գառաճատաղի , Հազրօյի , Մծրնայ և այլն հռվիտներուն հասուցած խոշորահատ և ճերմակ քրինձը Եգիպտոսի հոչակեալ բրինձէն անհամեմատ կերպով գերազանց է : Տերիկ ու

նեցած ձեթը , ձիթապտուղը , թուղը և նուռն ,  
և երկինքէն ձիւնի պէս անձրեած մանա-  
նան կամ գազպէն սքանչելի են համով և մե-  
ծութեամբ , որոց նմանը ուրիշ երկիրներտեա-  
նուած չէ : “Եսյնպէս Աղերդ , Արդնի և Զըն-  
քուշ ըսուած իր երկիրներուն խաղողն ու գինին  
անօրինակ են : Առանձին յիշատակութեան ար-  
ժանի են աս գաւառիս մէջ գտնուած բազմա-  
տեսակ ծանրագին մուշտակներն , առատ ա-  
ղէհանքները , և առողջարար ջերմուկները :  
Զափազանցութիւն ըրած չեմ ըլլար , թէ որ  
ըսեմ , որ աս գաւառիս մէջ բուսած պտուղը ,  
խոտն ու ծաղիկները անհամար են և անթիւ :  
Բաւական շերամի գործատուններ ալկան , բայց  
առանց արհեստի և կրթութեան , սակայն մե-  
տաքսագործութիւնն աղէկ յառաջ գացած է  
քաղաքացւոց բնական ճարտարատմութեամբը ,  
որոնց մետաքսեայ ձեռագործները աս դիս ան  
դին կը սփոխին , և աս տարի մինչև Լոնտրայի  
համաշխարհական մթերացոյցը (Էքսրօղիսիօն)  
Օսմանեան Տէրութեան հրամանաւ ներկայա-  
նալու պատիւն ունեցած են : Բաւական յառա-  
ջադէմ են ուրիշ արհեստներն ալ , ինչպէս ոս-  
կերչութիւնը , ներկարարութիւնը , կաշեգոր-  
ծութիւնը , երկաթագործութիւնը , պղնձագոր-  
ծութիւնը և այլ ամենայն կենցաղօգուտ արհես-  
տներն զոր մէկիկ մէկիկ չյիշենք : Մէկդի թո-  
ղունք նաև բոլոր ականատես աղքասիրաց ար-  
ցունքներուն նիւթեղած ան հնութիւնները ,

ան բարձր, թանձրու ամուլը պարիսպները, կի-  
սակործան հրաշակերտ բերգն և Տիգրանուհիի  
պալատն և ան աշխարհաւեր կործանմունքներէ  
մազապուր ճողոպրած և հիմակ անգամ կան-  
գուն մնացած շենքերն որ մարդուս միտքը կը  
յափշտակեն, և են սքանչելի օրինակ Արե-  
ւելեան—Հայկական ճարտարապետութեան:  
Աս ամէն առաւելութիւններէն աւելի են իր  
վաճառականութեան համար ունեցած յար-  
մարութիւնը, աս քաղաքսէ հիմուկուան Հա-  
յաստանի կեդրոնը, ունի հաղորդակցութիւն  
կարնոյ, Պարսկաստանի, Վանայ', Խար-  
բերդի, Եղեսիոյ, Օմիւռնիոյ, Պօլսոյ, Բերի-  
ոյ և ուրիշ ամէն քաղաքաց հետ, և աւելի  
գիւրութեամբ կը հաղորդակցի Հնդկաստանի  
հետ իր Տիգրիս գետին միջնորդութեամբը, ո-  
րուն վրայ անգադար կը սահին իր տձեւ բայց  
զարմանագործ լաստերը, որ կ'երթան Կին-  
ուէ, և Բաբելոն, ուրկից շոգենաւաց միջոցաւ  
իր վաճառքը գիւրութեամբ ցՀնդիկս կը փո-  
խադրուի: Ոինչեւ անգամ աս օրերս շատ Եւ-  
րոպացիներ ուղղակի Եւրոպայէն գալով Իս-  
կենտերուն, անկէց ցամաքէն կարաւանի ըն-  
թացքով տասնուշորս օրուան մէջ կը հասնին  
Տկերտ, ուսկից 14–15 օրով և երբեմն աւե-  
լի շուտ գետին առատութեան ատեն, կը հա-  
նին Բաբելոն և անկէց Պասրա, և Հնդկաս-  
տան: Եւրոպայի Հնդկաց հետ հաղորդակ-  
ցութեան ամենակարճ և ամենադիւրին ճամ-

բան աս ըլլալով, Ընդդիացւոց բարակամիտ  
Ծզն ու Տէրութիւնը տասը տարիեն աւելի է  
որ իր մասնաւոր ուշագրութիւնը աս քաղաքիս  
վրայ դարձուցեր է, և թէպէտե աս կողմերս  
Ընդդիոյ Տէրութեան ոչ հպատակ մը կայ  
և ոչ Ընդդիոյ վերաբերեալ գործք մը, ՚ի վե-  
րայ այսր ամենայնի Ընդդիական Հիւպատոսա-  
րան մը հաստատուած է, որուն ձեռքով անդա-  
դար քննութիւններ կ'ըլլուին գաւառին մէջ, և  
բազմաթիւ նորաղանդ քարոզելներ անրաւ-  
ծախքեր կ'ընեն, և առաքելութիւններ կը հաս-  
տատեն թէ Տ-կերտ, և թէ իր շրջակայքա-  
շաքները, ինչպէս Մերտին, Եղեսիա, Ար-  
շերդ, Բաղել, Խարբերդ և Կինուէ, և նոյն  
իսկ գեղերը, ինչպէս Աւերեկ, Հայնի, Լըճէ,  
Հազրօ, Գրմըլլպըլ, Ատուգեզ, Քեսպիկ,  
Ջարօխի և այլն, որ բաւական նշան է թէ Ընդ-  
դիոյ Տէրութիւնը քաղաքական նպատակներու  
և կրօնքի պատրուակաւ կուսակիցներ շատցը-  
նելու համար կը ջանայ, և ոչ թէ ՚իսէր կրօ-  
նից : Եւ ցաւօք սրտի կը հարկադրինք խոս-  
տովանիլ, որ աս եղած ծախքերը բոլորովին  
անօդուա չըլլալէն ՚ի զատ, ապագային հա-  
մար մեծ յոյս կը թողու, և արդէնմեր Հայազ-  
դի երեսի վրայ ձգուած անտերունչ ժողովուրդ-  
ները կ'որսացուին և պիտի որսացուին, թէ որ  
Ծզայինք հեղ մը աչքերնին աս Հայրենիաց  
ընտիր գաւառին վրայ չգարձնեն և դարման  
մը չընեն : Ինչ որ ըսինք, և պիտի ըսենք նո-

բաղանդից համար, չհասկըցուի որ կրօնական  
նկատմանց համար կ'ըսենք, այլ կ'ուզենք ազ-  
գին բարի նախանձը շարժել օտարականաց օ-  
րինակաւ: Թու որ իրաց վեճակը ասանկ մնա-  
լիք ըլլայ նէ, անշուշտ պէտք է գիտնայ Ազ-  
գը, որ քիչ ժամանակէ եաքը Հայութեան ա-  
նունն անգամ պիտի ջնջուի աս երկրէս, և ա-  
հա ան ատեն Ազգը (ո՞չ ցաւոցս) ամենամեծ և  
անդարմանելի կորուստ մը պիտոր ընէ: “Սորա-  
զանդք Տ—կերտի մէջ առաջին շենք համար-  
ուած Անգղիական Հիւպատոսարանը դպրոց ը-  
րին տղջկանց և տղայոց, և միանգամայն ժո-  
ղովարան և բնակարան քարողչաց, և կերպ  
կերպ խոստմունքներով և պարզեօք իրենց գը-  
լուխը ժողված են մեր աղջին որդիքը, ուր մենք,  
ինչպէս նաև ուրիշ աղջերն, որ են Յօյնք, Ա-  
սորիք և Քաղդեացիք չունինք բարեկարգ  
դպրոց մը, և ահա աս բարեկարգ դպրոցաց  
պակասութիւնն է մեր խեղճ Ազգը յետին թըլ-  
ուառութեան մէջ ձգողը: Անգղիսյ Տերութիւ-  
նըն աս օրերս աւելի և ջանք կ'ընէ կոր Ասոր-  
ոց ծովեղերեայ Առւետիա ըսուած նաւահան-  
գիստէն սկսեալ երկաթուղի մը հաստատել  
մինչեւ ցիներիա, և անկէց ցռապը գալէսի ըս-  
ուած աւերակ բերդաքաղաքն՝ որ մեր Պիրե-  
ծիկ ըսուած Եփրատայ նաւահանգիստ քաղա-  
քէն քիչ մը հեռուէ, և անկէց Եփրատայ  
վրայ շողենաւեր բանեցընելով հասնիլ Բարե-  
լոն և Հնգկաստան: Աս գործս որչափ որ ցան-

կալի և կենցաղօգուտ ալէնէ, բայց մեր խեղ-  
 ճութեան և յետին տգիտութեան մէջ գըտ-  
 նուող Եղգայնոց սպառսպառ կործանման վեր-  
 ջին հարուած մը պիտօր ըլլայ, վասն զի ահա  
 ան ատեն մեր Եղգայինք և մանաւանդ Եփրա-  
 տայ սահմանակից եղող քաղաքաց բնակիչքը,  
 ինչպէս են, Պիրեճիքցիք, Եղեսացիք, Մամա-  
 տեցիք, Խարբերդցիք, Առ Առ Առ, ըսել  
 կուզեմ բոլոր Հայաստան, քաղաքական պատ-  
 ճառներու համար անշուշտ պիտի յօժարամիտ  
 հակամիտին, Ընդղիացիս, և ան ատեն ո՞ւր պի-  
 տի մնայ Հայ և Հայութեան անունը, Հա-  
 յաստանի ամենէն ընտիր և բազմաթիւ բնակ-  
 չօք զարդարեալ երկիրները ձեռքէ ելլելէն  
 վերջը: Ես չարեացս ոչ միայն առջել առնե-  
 լու համար, այլ և ազգը վաճառականութեան  
 մէջ մեծաքայլ յառաջացընելու համար, ինծի  
 մի միայն գարման կ'երենայ, Համազգի Եղ-  
 բարք, որ մենք հիմակուց կ'անխենք, գէթ մէկ  
 երկելի և բարեկարգ դպրոց մը հաստատել  
 Տ—կերտ քաղաքին մէջ, որ ինչպէս ըսինք,  
 կեդրոն կը սեպուի բոլոր Հայաստանի, որուն  
 մէջ ընաիր Հոգաբարձուներու խնամքին ներ-  
 քեւ անխտիր գաստիարակուին ազգային ման-  
 կունք, և նաև օտարազգիք տղայք և աղջ-  
 կունք, և աս կերպով նորաղանդից սերմանե-  
 լեք ապականութեանց առջե կ'առնուի ան-  
 շուշտ: Իսկ Ընդղիոյ Տէրութեան հաստատե-  
 լիք երկաթուղիէն պատճառելիք վնասուց առ-

զե կրնայ առնուիլ, երբոր Օսմանեան բարձր  
 Տէրութեան յերբեմն ժամանակի մտածած  
 խորհուրդը՝ ի գործ դրուելիք ըլլայ, այս է  
 Տիգրիս և Եփրատայ միաւորութիւնը Տ—կեր-  
 ափ վերի կողմերը Մատենի մօտերը, ուր այս  
 երկու գետոց խտրոցը քիչքան մըն է, ան ա-  
 տեն Հնդկաց շոգենաւները կրնան համարձակ  
 Բարելոնէն մինչև Տ—կերտ գալ և երթալ,  
 վաճառք տանիլ և բերել հիմակուան լաստե-  
 րուն տեղ, որոնք թէպէտե Տ—կերտէն ցԲա-  
 րելոն ջրոյն ընթացից համեմատ կրնան սանիլ,  
 բայց ոչ երբէք ջրոյն ընթացից հակառակ  
 կրնան Բարելոնէն դառնալ յետս ջրով, այլ  
 կը հարկադրին լաստերը քակել, և նիւթերը  
 հոն վաճառելով, ցամաքէն գալ, որ մեծ ար-  
 գելք է վաճառականութեան և վաճառոց փո-  
 խաղըրութեան : Եւ Առետիայէն ցՊիրեճիկ  
 հաստատուելիք երկաթուղին փոխանակ ցՃա-  
 պըր գալէսի կանկ առնելու, կրնայ չորս օր-  
 ուան ճամբայ ալ շարունակուիլ մինչև ցՏ—  
 կերտ, որով աս քաղաքը ու շիտակը ըսելու  
 համար բոլոր Հայաստանը կ'ըլլայ կեդրոն և  
 միջոց հաշորդակցութեան բոլոր Եւրոպայի  
 Հնդկաստանի հետ, և ոչ միայն Հնդկաստա-  
 նի, այլ և Ըրեկլքի ուրիշ քաղաքաց հետ,  
 և ան ատեն Հայաստան կրնայ հիմակ անհը-  
 նարին գժուարութեամբ ու ծախքով Եւրոպա  
 փոխադրած ապրանքը դիւրաւ և քիչ ծախուք  
 Եւրոպա անցընել, և Եւրոպայինը ընդու-

նել։ Աս կերպով թէ Ազգին և թէ Օսմանեան  
մեծազօր Տէրութեան անսպառ և հաստատուն  
հարստութեան աղբեւը մը կը բացուի, Ազ-  
գը կը ծաղկի և կը յառաջանայ յամենայնի։  
Տերտու բնակչաց ընդունակութիւնը և ըլ-  
նական սրամտութիւնը և ձիրքերը ազգային  
յառաջադիմութեան երաշխաւոր կրնայ ըլ-  
լալ, երբոր փորձ ըլլալիք ըլլայ նէ, խօսքերնուա  
ճշմարտութիւնը բաւականաչափ կըստուգուի։  
Աս անտարակոյս է որ ինչպէս Հայաստանի  
երկիրը ընտիր ու պատուական է, անանկ ալ  
ան հողին և ջրոյն բարեխառն ազդեցութեամ-  
բը սնած մտքերն ալ շատ ընդունակ և առ ա-  
մենայն սերմանս գիտութեանց քաջայարմաք  
ըլլալու են, միայն թէ ընտիր մշակաց խնամ-  
քին կը կարօտին։

Աս առաջարկութեանցս վրայօք կըցան-  
կայի իմ սիրելի Ազգայնոցս կարծիքը իմանալ,  
և թէ որ իրենց կրթեալ ու մշակնալ միտքերը  
պակաս կամ սխալ մը նշմարելու ըլլան նէ տ-  
առնց մէջ, կը ցանկամ որ ուղղեն, և միանգա-  
մայն ազգային յառաջադիմութեան վրայ ի-  
րենց ի՞նչ գաղափար և խորհուրդ ունենալը  
յայտնեն, որպէս զի մենք ալ ըստ կարի գոր-  
ծակից ըլլալու մխիթարութիւնն ունենանք,  
թէ որ ներողամտութեամբ մեր տկար ծառա-  
յութիւնն ընդունելու կը բարեհաճին նէ։  
Մեր փափագը և վախճանը ուրիշ բան չէ,  
բայց եթէ մեր սիրելի Ազգին 'ի վխսառոց զերծ

մնալը, Հայութեան անարատ պահպանութիւնը, և Հայ Ազգին ըստ ամենայնի յառաջադեմ զարդանալը:

Վերջապէս աս ալ կարեռը կը համարինք ծանուցանել արգոյ ընթերցողաց, որ ինչոր ցարդ գրեցինք նէ ոչ եթէ 'ի լոյ կամպարզ երեակայութեամբ գրեցինք, այլ անձամբ ականատես եղած, և Հայաստանի շատ կողմերը պտտած և գործնական տեղեկութիւններ ստացած գրեցինք: Երանի՝ թէ ազգասէր անձինք աղէկ ու շաղրութիւն դնելով աս առաջարկութեանցս, իրենց իննամքով և փութովը պտղաբեր ընէին, որով մենք ալ համարձակութիւն կ'առնուինք աւելի ևս յայտնագոյնս խօսելու, և Ազգին ներողամտութիւնը թախանձելու Հայութեան և Հայաստանի վրայօք:

ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ՊԱՐԴԱՊԵՏ

ԷՆՖԻՒՃԵԱՆ Կ. Դ. Կ. Կ.








24.  
in 8

( 9 PM - H  
2045



mix

2013

«Ազգային գրադարան



6075

NL0039611

